

Հ.Մ.Ը.Մ.

Արի — Արեւույշ

Ն  
Ո  
Ր  
Ա  
Գ  
Ի  
Ր



Հ.Մ.Ը.Մ.

Արի - Արեւոյշ

Ն  
Ո  
Ր  
Ա  
Գ  
Ի  
Ր



ԼԻԲԱՆԱՆ 1999

**Պատրաստեց և խմբագրեց՝  
Կարպիս Գալասազալեան**

**Օգնական խմբագիր՝  
Գառնիկ Թորիկեան**

**Վերահրատարակութեան ամէն իրաւունք վերապահուած է  
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան**



## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ



Միութենական մեր կեանքին մէջ ընդհանրապէս եւ սկաւտութեան մէջ յատկապէս, դաստիարակչական գեղատիպ գիրքերու հրատարակութիւնը միշտ ալ ներկայացած է սուր անհրաժեշտութեամբ: Հ.Մ.Ը.-

Մ.ի իրերայաջորդ Պատգամաւորական Ժողովներ եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական համագումարներ բազմիցս մշակած են դաստիարակչական գիրքերու ծրագիրներ, որոնք սակայն չեն հասած վերջնական հրատարակութեան հանգրքաւանին:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը այս հրատարակութեամբ տարիներու եւ սերունդներու երազ մը կ'իրականացնէ, երբ 21րդ դարու Հ.Մ.Ը.-Մ.ական սկաւտին կը ներկայացնէ իր կեանքի, հա՛յ կեանքի նոր պայմաններուն պատշաճող գիրք մը, որ բովանդակութեան եւ մատուցման իր ձեւերով կը կարծենք որ հիմնական վերատեսութեան կ'ենթարկէ ցարդ կիրարկուած դաստիարակչական ծրագիրները:

Նախապէս, Հ.Մ.Ը.Մ.ի կարգ մը շրջաններ ունէին դաստիարակչական մասնակի ծրագիրներով իրենց գիրքերը, պատրաստուած՝ սկաւտական տեղական մարմիններու կողմէ: Այս հրատարակութիւնը կու գայ ընդգրկելու բոլոր ծրագիրները եւ համապարփակ ձեւով ներկայացնելու Հ.Մ.Ը.Մ.ի սկաւտութեան ազգային եւ բարոյական վեհ

սկզբունքները, օրինակելի քաղաքացիի եւ տիպար հայու կերտման գոյգ առաջադրանքներով:

Կը հաւատանք, որ այս հրատարակութիւնը մնալուն ուղեցոյցը պիտի հանդիսանայ Հ.Մ.Բ.Մ.ական սկաուտին, անբաժան ընկերակիցը ըլլայ անոր՝ հաւաքոյթներու եւ աշխատանքային հանդիպումներու ընթացքին: Սկաուտը պիտի գուրգուրայ իր գիրքին վրայ, բժախնդրօրէն գործադրէ հոն տեղ գտած վարժութիւններն ու թելադրանքները եւ, ամէնէն կարելորը, ջանք չխնայէ զանոնք գործնապէս արտայայտելու իր անմիջական շրջապատին մէջ:

Հրատարակութիւնը պատրաստուած է սկաուտական աշխատանքներու մէջ երկարամեայ փորձառութիւն ունեցող պատասխանատուներու կողմէ: Ներկայացուած նիւթերը քննուած եւ ուսումնասիրուած են համա-Հ.Մ.Բ.Մ.ական խմբապետական համագումարներուն, վերջին տարիներուն փորձարկուած են շրջաններու մէջ եւ հրատարակութեան յանձնուած՝ Սիտնիի համա-Հ.Մ.Բ.Մ.ական խմբապետական Գ. համագումարին կողմէ վերջնական վերանայումի ենթարկուելէ ետք:

Կ'ընդունինք, որ այս գործը կրնայ կատարեալ եղած չըլլալ, սակայն կը կարծենք, որ երկար պատրաստութիւններէ եւ փորձարկումներէ ետք անիկա հեռու չէ կատարեալէն եւ լաւապէս կրնայ ծառայել իր նպատակին:

Հ.Մ.Բ.Մ.Ի

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



	Անուն -----
	Մականուն -----
	Ծննդեան թուական -----
	Մուտքի թուական -----
	Հեռաձայնի թիւ -----

Մասնաճիւղ

-----

Խումբի թիւ

-----

Խմբակի անուն

-----

Գրքոյկը սկսւյ  
գործածել

----- / ----- /

----- -ին:

Գրքոյկը  
ամբողջացաւ

----- / ----- /

----- -ին:

Խմբապետ

-----

Փոխ խմբապետ

-----

Վարիչ առաջնորդ

-----

Առաջնորդ

-----

# Ն Ա Խ Ա Բ Ա Ն

*Սիրելի Եղբայր-Քոյր,*

*Այս գրքոյկը պատրաստուած է քեզի, որ նորագիր եւ եւ կը պատրաստուիս նորընծայ ըլլալ:*

*Այս գիրքը չէ պատրաստուած այն իմաստով որ կարդաս, սորվիս գրուածը եւ բովանդակութիւնը, այլ՝ անիկա աշխատանքի փերակ մըն է: Էջերուն մէջ պիտի հանդիպիս պարտականութիւններու, փնտրութիւններու եւ գծագրութիւններու, զորս պիտի կատարես:*

*Պիտի հանդիպիս նաեւ գրութիւններու, որոնք պիտի սերտես, իրացնես եւ պէտք եղած պարագային իբրեւ աղբիւր գործածես:*

*Հաւանաբար հանդիպիս դժուարութիւններու . դիմէ խմբակարգիդ, դաստիարակիդ կամ ծնողքիդ, վարահարար անոնք քեզի կու փան պէտք եղած ցուցմունքները:*

*Այս անշնական փերակդ է: Մարտը պահէ զայն, որպէսզի ան ըլլայ օգտակար աղբիւր մը եւ լաւ յիշատակարան մը:*

# Ն Ո Ր Ա Գ Ի Ր

♦ Նորագիրը պարտի նուագագոյնը 11 տարեկան ըլլալ:

♦ Նորագիրը մինչեւ խոստում տալը կ'ունենայ երեք ամսուան փորձառական շրջան մը:

♦ Նորագիրը նախքան խոստում տալը պարտի գիտնալ.-

էջ

1.- Ազգային դրօշակին իմաստը.....	9
2.- Ազգային քայլերգը.....	11
3.- Ապրած երկրի քայլերգը, դրօշակը եւ անոնց իմաստը .....	14
4.- Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան պատմութիւնը.....	16
5.- Հասկնալ եւ գործադրել Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական խոստումը եւ դաւանանքը.....	19
6.- Հ.Մ.Ը.Մ.ի նշանակը եւ նշանաբանը.....	34
7.- Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան նշանակը եւ նշանաբանը.....	36
8.- Սկաուտութեան խորհրդանիշը եւ նշանաբանը.....	38
9.- Խոստման արարողութեան իմաստը եւ խորհուրդը.....	41
10.- Բարեւներու տեսակները եւ անոնց գործածութեան եղանակը.....	44
11.- Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական տարագին զանազան մասերը.....	48



♦ Նորագիրի մը փորձառական շրջանին հսկողութիւնը եւ գիտելիքներուն փոխանցումը կը ստանձնէ խումբին խմբապետութիւնը:

## 1.- Ազգային Դրոշակին Իմաստը

*Ամբողջացո՛ւր պարապ ձգուած բառերը.*

*Հայ ազգային դրոշակը բոլորիս կողմէ  
ճանչցուած - - - - - դրոշակն է: Ան  
իբրեւ հայ ազգի դրոշակ որդեգրուեցաւ - - -  
- - - - -ին: Այդ թուականին Հայաստան  
երկար տարիներ օտար լուծի տակ մնալէ  
ենք - - - - - պետութիւն դարձաւ:*

*Գծէ՛ ազգային դրոշակը եւ ապա ներկէ՛.*

**Գրե՛լ իւրաքանչիւր գոյնին իմաստը.**

*Կարմիր գոյնը կը ներկայացնէ .-*

-----  
-----

*Կապոյտ գոյնը կը ներկայացնէ .-*

-----  
-----

*Նարնջագոյնը կը ներկայացնէ .-*

-----  
-----

1920-ին, երբ Հայաստան խորհրդայնացաւ, այս դրօշակը գործածուելէ դադրեցաւ, ապա եօթանասուն տարիներ ետք, երբ Խորհրդային Միութիւնը քայքայւեցաւ, Հայաստան վերագտաւ 28 Մայիս 1918-ին կերտած Անկախութիւնը եւ Հայաստանի Հանրապետութիւնը 27 Մայիս 1989-ին երազոյն դրօշակը վերահաստատեց որպէս ազգային դրօշակ:



## 2. Ազգային Քայլերգը

*Մեր հայրենիք ազատ անկախ,  
Որ ապրել է դարէ դար  
Իր որդիքը արդ կանչում է  
Ազատ, անկախ Հայաստան:*

*Ահա՛, եղբայր, քեզ մի դրօշ,  
Որ իմ ձեռքով գործեցի,  
Գիշերները ես քուն չեղայ,  
Արտասուքով լուացի:*

*Նայիր նրան երեք գոյնով,  
Նուիրական մէկ նշան,  
Թող փողփողի թշնամու դէմ,  
Թող միշտ պանծայ Հայաստան:*

*Ամենայն տեղ մահը մի է,  
Մարդ մի՛ անգամ պիտ՛ մեռնի  
Բայց երանի՛ որ իր ազգին  
Ազատութեան կը զոհուի:*

Այս երգը իր սկզբնական ձևով գրած է Միքայէլ Նալպանտեան 1859 թուականին, ուղղուած՝ ցարական եւ սուլթանական բռնակալութիւններուն դէմ:

Հայաստանի Հանրապետութիւնը երբ դուրս եկաւ Խորհրդային Միութենէն եւ ինքզինք անկախ հռոչակեց, որոշեց ունենալ Հայաստանի Հանրապետութեան նոր քայլերգ:

Այս երգը, որպես քայլերգ որդեգրուեցաւ 1990 Օգոստոս 24-ին:

**Ընդօրինակէ՛ մնացածը.**

Մեր հայրենիք ազատ անկախ,

-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----

Ամէն ազգ ունի երգ մը, որ յարգանքով կ'երգուի եւ կը լսուի նոյն ազգին բոլոր անհատներուն կողմէ: Այդ երգը կը կոչուի ազգային քայլերգ:

Բոլոր քայլերգներուն նման, մեր քայլերգն ալ պետք է արժանանայ ամենամեծ յարգանքի, որովհետեւ ան կ'արտայայտէ հայ անհատին փափաքը եւ երազը իր հայրենիքին հանդէպ: Քայլերգը կ'երգենք ոտքի, պատրաստ վիճակի մէջ, լրջօրէն, կտրուկ ձեւով եւ ամբողջութեամբ:

*Գրել ազգային քայլերգին բացատրութիւնը տող առ տող.*

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----



### 3.- Ապրած Երկրի Քայլերգը, Գրօշակը և Անոնց Իմաստը

*Ընդօրինակէ՛ ապրած երկրիդ քայլերգը.*

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

Ո՞վ շարադրած է քայլերգին բառերը.

.....

Ո՞վ յօրինած է եղանակը.

.....

Որպես լաւ քաղաքացիներ, սկսուածները պէտք է յարգեն իրենց ապրած երկիրը եւ կառավարութիւնը, պէտք է յարգեն նաեւ այդ երկրին քայլերգը եւ դրօշակը:

Քայլերգը պէտք է երգել ոտքի, պատրաստ վիճակի մէջ, լրիւ, կտրուկ եւ յստակ:

**Գծէ՛ եւ ներկէ՛ ապրած երկրիդ դրօշակը.**

Ի՞նչ են դրօշակին չափերը կամ վանազան բաժիններուն համեմատութիւնները.

-----  
-----

Սկսուածը պէտք է գուրգուրայ դրօշակին, որովհետեւ ան իր պարծանքն է ու տեսլականը: Պէտք է բարեւ դրօշակին, երբ ան բարձր դիրքի վրայ է: Իսկ երբ չի գործածուիր, պէտք է մաքուր, յատուկ ձեւով ծալուած եւ ապահով տեղ մը պահուի: Պէտք է զգոյշ ըլլալ որ դրօշակը բնաւ գետին չքսուի:

## 4.- Հ.Մ.Ը.Մ.ի Սկաուտութեան Պատմութիւնը

1907ին, անգլիացի գօրավար Լորտ Պէյտըն Փաուըլ հիմնեց սկաուտական շարժումը, մեկնելով երիտասարդները փոքր տարիքէն դաստիարակելու պահանջէն: Այդ օրերուն Պոլիսէն հայ երիտասարդ մը՝ Ծաւարշ Բրիսեան Եւրոպա գացած էր ուսանելու: Ծաւարշ Բրիսեան



Եւրոպա գտնուած իր շրջանին ծանօթացաւ ըսկաուտութեան: Ան երբ վերադարձաւ Պոլիս, թերթերու միջոցաւ սկաուտական շարժումը ծանօթացուց հայերուն, գովելով այդ շարժումին դաստիարակչական, ֆիզիքական եւ բարոյական յատկութիւնները: Ծաւարշ Բրիսեան կը մտածէր նաեւ հիմնել միութիւն մը, Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութիւն անուան տակ, որուն նպատակը պիտի ըլլար հայ մարզական բոլոր ակումբները հաւաքել մէկ անունի տակ եւ կիրարկել նաեւ սկաուտութիւն:

Հայ վարժարաններն ու միութիւնները փորձեցին իրացնել սկաուտական սկզբունքները: Յաջող աշխատանք տարին Յովհաննէս Հինդլեան, որ դըպրոցի տնօրէն էր, եւ Գրիգոր Յակոբեան, որ սկաուտութիւնը սիրող մըն էր: Այս երկուքը փորձեցին ըսկաուտութիւնը տարածել Պոլսոյ զանազան





*Շարաշ Բրիսեան*

ըրջանակներուն մէջ, սակայն համաշխարհային Ա. պատերազմին պատճառով աշխատանքը յառաջ չգնաց: Այս պատերազմի ընթացքին հայերը տեղահան եղան իրենց հայրենիքէն եւ դարձան գաղթական: Պատերազմի աւարտին, 1918 թուականին, հայ գաղթականներ եւ որբեր սկսան հաստատուիլ Պոլսոյ մէջ, որ համեմատաբար նըրազ ազդուած էր պատերազմի հետեւանքներէն: Հոն գտնուող հայերը ամէն ձեւով փորձեցին օգնել իրենց ազգակիցներուն:

Գրիգոր Յակոբեան, որ պատերազմէն ետք մնացած էր Պոլիս, իր գործակիցներուն ընկերակցութեամբ մտածեց կազմել սկաուտական խումբեր եւ սկաուտներու միջոցաւ օգնութեան հասնիլ այդ որբերուն: Անոնք ծրագրեցին հիմնել Հ.Մ.Ը.Մ.ը եւ հայ սկաուտներու շարժումը, ինչպէս նախատեսած էր Շարաշ Բրիսեան: Ծրագիրը յաջողեցաւ եւ նոր արձանագրուած սկաուտներ դրամ



*Գրիգոր Յակոբեան*

հաւաքելով, դեղ, դարման, հագուստ եւ տաքնալու փայտ հայթայթելով օժանդակեցին չքաւոր ընտանիքներուն:

Միւս կողմէ, որբանոցներ բացուեցան հայ որբերուն յատուկ: Հ.Մ.Ը.Մ.ի ղեկավարները այդ որբանոցներուն մէջ հիմնեցին սկաուտական շարժում, խմբապետներ ուղարկելով անոնց: Սկաուտութիւնը արագ ձեւով զարգացաւ որբանոցներէն ներս:

Շուտով կազմուած սկաուտական խումբերը իրարու միջեւ մարզական խաղեր կազմակերպեցին եւ հանդէսներով ներկայացան հայ ժողովուրդին: Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները մասնակցեցան հայ ազգային եւ եւրոպական երկիրներու տօներուն առթիւ կազմակերպուած տողանցքներուն, ջահագնացութիւններուն եւ քաջալերուեցան ժողովուրդէն:

Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները իրենց գիտելիքներու զարգացման եւ առողջ ու շարքաշ կեանքի վարժութեան համար մասնակցեցան բանակումներու, արշաւներու եւ զանազան ուրիշ աշխատանքներու:



*Յովհաննէս Հինդլեան*

**5.- Հասկնալ եւ Գործադրել  
Հ.Մ.Ը.Մ.ի Սկառուտական  
Խոստումը եւ Դաւանանքը**

«Կը խոստանամ

- Ըլլալ հաւատարիմ Աստուծոյ  
եւ ծառայել Ազգիս ու Հայրենիքիս:
- Միշտ օգնել ուրիշին եւ գործել իբրեւ  
պարտականութեան գիտակից, արի  
եւ վեհանձն մարդ:
- Հնազանդիլ Հ.Մ.Ը.Մ.ի Արիներու  
(Արեւոյշներու) դաւանանքին:

**Տո՛ւր հետեւեալ բառերուն իմաստը.**

Պատիւ - - - - -

Խոստում - - - - -

Հաւատարիմ - - - - -

Պարտականութիւն - - - - -

Արի - - - - -

Վեհանձն - - - - -

Հնազանդիլ - - - - -



**Պրէ՛ խոստումին բացատրութիւնը  
տող առ տող.**

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

**Պատասխանէ՛ հետեւեալ հարցումներուն.**

Ե՞րբ Արի (Արեւոյշ) մը խոստում կու տայ.

-----

-----

Ի՞նչ կտորներ եւ նշաններ կ'աւելնան  
տարազին վրայ.

-----

-----

-----

-----

-----

-----

## ԴԱԻԱՆԱՆՔԸ

Սկաուտի մը կեանքը ճշգրիտ ուղղութիւն ունենալու համար, կայ 12 յօդուածներէ կազմուած ամբողջութիւն մը, որ կը կոչուին.- «Սկաուտին Դաւանանքը»

- 1.- Արիւն (Արեւոյշիւ) խօսքը նուիրական է:
- 2.- Արիւն (Արեւոյշիւ) հնազանդ է:
- 3.- Արիւն (Արեւոյշիւ) հաւատարիմ է ուղղամիտ է:
- 4.- Արիւն (Արեւոյշիւ) միշտ կ'օգնէ ուրիշին:
- 5.- Արիւն (Արեւոյշիւ) քարեկամ է բոլորին եւ եղբայր (քոյր)' ուրիշ սկաուտի, առանց բնկերային կարգի խտրութեան:
- 6.- Արիւն (Արեւոյշիւ) քարեկիրթ է:
- 7.- Արիւն (Արեւոյշիւ) մաքուր հայերէն կը խօսի ամէն տեւն եւ ամէն տեղ:
- 8.- Արիւն (Արեւոյշիւ) անասունները եւ բոյսերը կը սիրէ ու կը պաշտպանէ:
- 9.- Արիւն (Արեւոյշիւ) միշտ գուարթ է խանդավառ է:
- 10.- Արիւն (Արեւոյշիւ) աշխատասէր է կորովի է:
- 11.- Արիւն (Արեւոյշիւ) տնտեսող է:
- 12.- Արիւն (Արեւոյշիւ) մաքուր է մտածումով, խօսքով եւ գործով:

## 1.- Արիին (Արեւոյշին) խօսքը նուիրական է

Աշխարհի վրայ գէշ բաներ են՝ խաբերայութիւնը, սուտը, եւ այլն: Վստահաբար գիտես ստախօս Միհրանին պատմութիւնը, ուր Միհրան քանի մը անգամ կը խաբէ գիղիկ բնակիչները: Թէ գայլը եկած է ու ոչխարները կ'ուտէ, իսկ երբ գայլը իրաւ կը յարձակի, այս անգամ ոչ ոք կը հաւատայ իրեն:

Ի՞նչ է այս պատմութեան իմաստը: Սուտի եւ խաբերայութեան հետեւանքով մարդիկ վստահութիւն կորսնցուցին խաբերայ Միհրանին հանդէպ: Պիտի ուզէի՞ր որ մարդիկ չվստահին քեզի, կասկածին ըսածիդ, ըսեն որ այս տղան բան մը կը խոստանայ, բայց չ'ընեն որ տարբեր աչքով նային քեզի: Ո՛չ: Ուրեմն՝ խօսքդ միշտ նշմարիտ, անկեղծ եւ նուիրական պիտի ըլլայ:

## 2.- Արին (Արեւոյշը) հնազանդ է

Երեւակայէ 100 անձերէ կազմուած երգչախումբ մը, որուն անդամները խմբավարին դիմաց կանգնած՝ կ'երգեն առանց իրեն հետեւելու կ'երգեն: Ի՞նչ կ'ըլլայ արդիւնքը: Ի՞նչ տեսակի իրարանցում եւ անախորժ աղմուկ կ'ըլլայ:



Երեւակայէ նաեւ բանակ մը, որուն զինուորները չեն հետեւիր իրենց պետին: Որեւէ գործողութիւն պիտի ձախողի: Մէկը կը յարձակի, ուրիշ մը յառաջ կ'երթայ, միւսը



տակալին տեղը մնացած է, եւայլն: Արդիւնքը սպասածը չ'ըլլար:

Այս երկու օրինակներուն մէջ կը տեսնենք հաւաքականութիւն մը եւ ղեկավար մը: Երբ հաւաքականութիւնը չի հնազանդիր ղեկավարին, աշխատանքը անպայման կը ձախողի եւ արդիւնքը չ'ըլլար սպասածը:

Արին ալ, ըլլա՛յ խմբակին, խումբին կամ մասնաճիղին մէջ, կը կազմէ մէկ մասնիկը հաւաքականութեան մը: Ան պիտի հնազանդի իր ղեկավարին: Ընտանիքի որպէս անդամ, սկաուտը նաեւ պիտի հնազանդի իր հօրը, մօրը եւ իրմէ արեւի տարեցներուն: Մտածէ թէ որքա՞ն կրնաս օգտուիլ քու մեծերուդ փորձառութենէն, հնազանդելով անոնց տուած ցուցմունքներուն:

Իսկ եթէ պատահի, որ առարկութիւն մը, ըսելիք մը ունենաս տրուած հրահանգի մը մասին, դիտողութիւնդ ըրէ տրուած հրահանգը գործադրելէ ետք միայն:

### *3.- Արին (Արեւոյշք) հաւատարիմ եւ ուղղամիտ է*

Կրնա՞յ ըլլալ որ անձ մը գէշութիւն ընել մտածէ եւ սակայն բարիք ընէ: Անկարելի՛ է: Անձ մը կը գործէ, այն ինչ որ կը մտածէ ուղեղը: Ուրեմն եթէ ուղեղը մտածէ չարութիւն ընել, ապա այդ անձը պիտի չարագործէ: Եթէ մտածէ ստել, վերջ ի վերջոյ պիտի ստէ: Ուրեմն սկաուտը պիտի լսէ իր խիղճը ու ըստ այնմ պիտի մտածէ, ուղիղ միտք ունենայ: Հաւատարիմ պիտի ըլլայ իր մտածումներուն ու սխալներ չգործէ, իսկ եթէ պատահի որ սխալ մը գործէ, սկաուտը պիտի գիտնայ սրբագրել սխալը ու ներողութիւն խնդրէ առնչակից անձերէն:

#### 4.- Արին (Արենոյշը) միշտ կ'օգնէ ուրիշին

Մարդկային լաւագոյն յատկութիւններէն մէկը կը համարուի իր նմանին օգնելու հասկացողութիւնը եւ գործնականօրէն կիրարկումը:

Վերջին հաշուով մարդ արարածը ինք իրեն համար չէ որ կ'ապրի. ժողովրդային ասացուածքը կ'ըսէ. «Մարդ՝ մարդով է մարդ»: Եւս բնական է, որ մեր կեանքին մէջ, մենք եւս պէտք ունենանք ուրիշներու օգնութեան: Պատկերացուր, որ օր մը դուն փոսի մը մէջ ինկած ես եւ մարդիկ միայն քեզ կը դիտեն, արդեօք ի՞նչ պիտի զգայիր, ի՞նչ ապրումներ պիտի ունենայիր: Արդ, ուրիշներ ալ կրնան կարիքը զգալ քու օժանդակութեանդ:



Որպէս սկսուտ քու նշանաբանիդ՝ «Մի՛շտ Պատրաստ»-ին հաւատարիմ, անվարան օգնութեան հասիր մանաւանդ անկարներուն, օրինակ, եթէ կոյր մը ճամբայ պիտի անցնի ձեռքդ երկարէ իրեն, ծեր մը եթէ ի վիճակի չէ ծանր բեռ մը շալկելու, օգնէ իրեն, եւայլն: Լաւապէս պէտք է ըմբռնես, որ կատարած բարիքիդ դիմաց որեւէ ակնկալութիւն պիտի չունենաս:

Այս բոլորէն ետք, պիտի ունենաս կեանքիդ ամէնէն ուրախ պահը, երբ պիտի տեսնես որ քու օգնութեամբ քեզի նմանները երջանկացուցած ես:



**5.- Արին (Արենոյշք) բարեկամ է բոլորին և եղբայր՝ (քոյր) ուրիշ սկաուտի, առանց ընկերային կարգի խախտութեան:**

Ինչպէս գիտես, սկաուտութիւնը համաշխարհային շարժում մըն է, որուն անդամները ունին միեւնոյն դաւանանքը և նոյնանման նպատակ: Այս անդամները միասին կը կազմեն մէկ ընտանիք՝ սկաուտական ընտանիքը, և իբրև մէկ ընտանիքի անդամներ, անոնք եղբայրներ և քոյրեր են: Այս պէտք է ըլլայ

սկաուտին յարաբերութեան չափանիշը ուրիշ սկաուտի մը հետ, իսկ եթէ դիմացինը սկաուտ չէ՝ անոր պէտք է նայի որպէս բարեկամ. պէտք չէ արհամարհէ աղքատը կամ ատէ հարուստը, այլ նայի հաւասար աչքով:



**6.- Արին (Արենոյշք) բարեկիրք է**

Սկաուտը քաղաքավար է ու պէտք է յարգէ շուրջինները, բայց գիտցիր որ միայն չհայհոյելով կամ ուրիշին նեղութիւն չտալով չէ որ քաղաքավար կ'ըլլաս: Ապրելակերպդ մեծ դեր ունի: Եթէ թոյլ տաս որ քու մեծերդ անցնին քեզմէ առաջ, կամ եթէ սպասես որ տարեց մը նախ խօսի, և այլն, այդ ատեն կ'ըլլաս բարեկիրք: Արդէն բառին երկու բաժիններով կը բացատրուի իմաստը - «Բարի» և «Կիրք»:





**7.- Արին (Արեւոյշք) մարտի հայերէն կը խօսի ամէն արեւն եւ ամէն փեղ**

Հաւաքականութիւն մը կը կոչուի ազգ, երբ ունի իրեն յատուկ հայրենիք եւ լեզու: Մենք ալ հայերս որպէս ազգ ունինք «հայերէն» լեզուն՝ մեր լեզուն:

Եթէ հայ ենք, ինչո՞ւ օտար լեզու պիտի խօսինք մեր հայ ընկերներուն հետ: Մեր լեզուին մէջ բառե՞ր կը պակսին: Հայերէնով դժուա՞ր է բան մը բացատրել հայ բարեկամիդ: Մեր լեզուն տգե՞ղ է: Ո՛չ: Մեր լեզուն ամէնէն հին լեզուներէն է ու անուշ է: Ուրեմն պէտք է խօսինք մեր լեզուն:



Ուրիշ հարց մըն ալ կայ. կարելի՞ է երկու լեզու գործածել միաժամանակ, այսինքն՝ կարելի՞ է քանի մը բառ հայերէնով եւ քանի մը բառ օտար լեզուով կազմել նախադասութիւն մը: Ո՛չ: Նախընտրելի է ամբողջութեամբ մէկ լեզուով արտայայտուիլ, կա՛մ հայերէնով կամ ամբողջութեամբ ուրիշ լեզուով:

**8.- Արին (Արեւոյշք) անասունները եւ բոյսերը կը սիրէ ու կը պաշտպանէ**

Սկաւտ մը պէտք չէ շարչարէ կամ սպաննէ այն անասունները, որոնք վնաս չեն հասցներ իրեն: Ինչո՞ւ կոխկոտել մրջիւնները, կամ ինչո՞ւ կից տալ թաղին շան կամ կատուին. ի՞նչ վնաս կը հասցնեն քեզի: Անոնք նոյնիսկ կարելոր են մարդոց համար: Օրինակ, թաղին շունը կը զգուշացնէ թաղեցիները, երբ օտար անձ մը գայ: Կատուն հեռու կը պահէ առնէտներ եւ

վնասակար զանազան միջատներ: Այսուհանդերձ, գիտենք որ մսեղէննները կու գան կենդանիներէն: Ուրեմն, պիտի շօգտագործե՞նք կենդանիները, որպէս սնունդ: Միտք բանին այն պէտք է ըլլայ, որ պէտք չէ շարշարել կենդանիները զանոնք մորթած ժամանակ. պէտք է վարպետօրէն կատարել գործողութիւնը, արագ եւ սուր դանակով: Բան մը եւս, սիրելով եւ պաշտպանելով հանդերձ կենդանիները, մարդիկ պէտք է ըզգուշանան անոնց մօտ ապրելէ, որովհետեւ անասունները ունին զանազան մանրէներ, որոնք վտանգաւոր են մարդոց առողջութեան համար: Ինչ կը վերաբերի բոյսերուն, պէտք է որ մարդիկ պաշտպանեն բոյսերը եւ կանաչութիւնը, որոնք կարելոր են երկրագունդին, որովհետեւ կու տան թթուածին (Oxygène) եւ կը հաւասարակշռեն աշխարհի կլիմայական (Ecologic) վիճակը: Իսկ ծաղիկներն ու բոյսերը իրենց հաճելի գոյններով կը գեղեցկացնեն մեր շրջապատը եւ հանդարտութիւն կու տան մարդոց հոգիներուն:

#### *9.- Արին (Արենոյշք) միշտ գուարք եւ խանդավառ է*

Եթէ սկառուտ մը կարենայ յաղթահարել դժուարութեան եւ տխրութեան, միշտ ուրախ կ'ըլլայ: Օրինակ, եթէ տրուած է քեզի պարտականութիւն մը՝ ջուր բերել բանակավայր, կրնաս ինքզինքիդ հարցնել, թէ միայն ե՞ս կայի ջուր բերելու համար եւ թէ՛ պիտի յոգնիմ, դժուար է, ծանր է: Այս պարագային տխուր պիտի ըլլաս: Բայց եթէ ըսես ինքզինքիդ, թէ եղբայրներուս կարիքը հոգալու համար այսօր ե՛ս կը բերեմ ջուրը, վաղը ուրիշ մը կը բերէ, պիտի ըլլաս ուրախ, որ բարիք



մը կը գործես եւ օգտակար կ'ըլլայ: Երկրորդ օրինակ մը, ընտանիքով այցելութիւն մը պիտի կատարէք եւ սակայն դուն կ'ուզէիր ընկերոջ մը հետ պաղպաղակ ուտելու երթալ: Կրնաս ըսել, որ տխուր ես, որովհետեւ ուզածդ պիտի չկարենաս ընել: Բայց կրնաս նաեւ ըսել, որ ուրիշ առթիւ ընկերոջս հետ կ'երթամ եւ կ'ըլլայ օտրախ:

Սկսուտը կ'արտայայտէ իր ուրախութիւնը: Խանդավառ է, կ'երգէ, կանչեր կ'ըսէ: Բայց շատեր կը շփոթեն զըւարճութիւնը իրարանցումին հետ: Խանդավառութիւնը ունի իր կարգն ու կանոնը, որոնք սահմաններուն մէջ պէտք է մնայ սկսուտը:



### 10.- Արին (Արեւոյշք) աշխատասէր եւ կորովի է




Աշխատասիրութիւնը մարդկային յատկութիւն մըն է: Ան կ'ապահովէ մարդոց գոյութիւնը: Սկսուտը միշտ կ'օգնէ ուրիշին: Գործով, աշխատանքով արդիւնքի հասնելով է որ օգնած կ'ըլլայ: Աշխատանքով օգնած կ'ըլլայ նաեւ ինքզինքին: Աշխատանքով մէկը փորձառութիւն ձեռք կը ձգէ: Կ'ըսուի, որ փորձառութիւնը ամենամեծ դպրոցն է: Աշխատասէր անձ մը իր կատարած գործերուն արդիւնքով կ'ունենայ նաեւ հոգեկան գոհունակութիւն:



Կրնա՞ս երեւակայել ծոյլ սկառուտ մը, ինչպէ՞ս պիտի «Բարձրանայ ու Բարձրացնէ», ինչպէ՞ս պիտի «մի՛շտ օգնէ ուրիշին», ինչպէ՞ս «մի՛շտ պատրաստ» պիտի ըլլայ:

### 11.- Սկառուտը փնփնսող է

Ծիշդ բացատրութիւն մը տալու համար, «տընտեսող» բառին կրնանք ըսել. ճիշդ տեղը եւ պէտք եղածը գործածել, պէտք եղած քանակութեամբ միայն: Տնտեսելու մէջ կայ նաեւ հետեւեալը. աշխատանքի մը համար օգտագործել հինգսոթ կամ անգործածելի առարկաներէ եկած զանազան բաժիններ, օրինակ՝ եթէ ձեռային աշխատանքի մը համար պէտք ունենանք խաւաքարտի, կրնանք գործածել կօշիկի տուփերու խաւաքարտը: Ուրիշ բան մը եւս, գործածուած առարկայ մը, անգամ մը եւս կարենալ գործածելու համար, պէտք է հոգ տանիլ անոր: Օրինակ, ձեռային աշխատանքի մը համար օգտագործուած պարանները պէտք է վերստին քակել ամբողջութեամբ եւ փաթթել, պահել եւ ոչ թէ կրտրրտել: Հիւսք կապ մը ընելէ ետք, եթէ պարան աւելնայ՝ պէտք չէ կտրել, այլ ամփոփել եւ պահել, ուրիշ անգամ մը աւելի երկար պէտք ունենալու պարագային գործածելու համար:



## 12.- Արին (Արենոյշք) մաքուր է մաթումով, խօսքով եւ գործով

Ինչպէս կարելոր է մարմինը մաքուր պահել, կարելոր է նաեւ միտքը մաքուր պահել, որովհետեւ եթէ աղտոտ մարդը հիւանդութիւն կը յառաջացնէ մարմինին, այդպէս ալ աղտոտ մտածումը իր վատ անդրադարձը կ'ունենայ սկաուտին խօսքին եւ գործին վրայ: Եթէ սկաուտին ուղեղը, միտքը լեցուին գէշ մտածումներով, ան վստահաբար պիտի սկսի ստախօսել, բամբասել եւ անվայել բառեր գործածել (խօսք) կամ նոյնիսկ գողնալ ու չարութիւններ ընել (գործ): Դուն որոշէ, սկաուտին ո՞րն է վայելը – աղտոտ միտք, ստախօսութի՞ւն, զեղծարարութի՞ւն, թշնամութի՞ւն, գողութի՞ւն, թէ մաքուր միտք նուիրական խօսք, հաւատարմութիւն եւ ուղղամտութիւն:



Ահաւասիկ սկաուտի դաւանանքին 12 յօդուածները: Թող անոնք ըլլան կեանքի ուղեցոյցդ, եւ ընդունէ զանոնք իբրեւ մնայուն պատուէր: Ապա տես, թէ կեանքդ որքան աւելի ուրախ պիտի ապրիս, որքան աւելի ընկերներ եւ բարեկամներ պիտի ունենաս եւ խիղճըդ որքա՞ն հանգիստ պիտի ըլլայ:

**Կատարէ՛:**

Առօրեայ կեանքէն տուր 3 օրինակներ, ուր կ'օգնես ուրիշին.

Ա. -----

-----

-----

-----

-----

-----

-----

Բ. -----

-----

-----

-----

-----

-----

-----

Գ. -----

-----

-----

-----

-----

-----



**Ամբողջացո՛ւր հետեւեալ տախտակը.**

	ճիշդ	սխալ
Հանրակառաքին մէջ նըստած ես ու կին մը կը բարձրանայ ու տեղ չունի նստելու: Իրեն տեղդ կու տաս:		
Ուշ գիշերին ընկերներով կը վերադառնաս շարժապատկերի սրահէն ու ճամբան բարձրաձայն կը խօսիք ժապաւէնին մասին:		
Դրացիին մայրը մահացած է, կը պգուշանաս հեռատեսիլին ձայնը բարձրացրնելու:		
Եկեղեցի կ'երթաս ծովու յարմար կարճ տաքատով եւ շապիկով:		
Տեղէ մը ներս մտած ատեն թոյլ կու տաս որ քեզմէ առաջ անցնին տարեցները:		

Գրէ՛ 2 օրինակներ, ուր աշխատանքի մը  
ընթացքին խնայողութիւն կ'ընես.

Ա.

-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----

Բ.

-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----

## 6.- Հ.Մ.Ը.Մ.ի Նշանակը և Նշանաբանը

Գծե՛ր ապա ներկե՛ Հ.Մ.Ը.Մ.ի նշանակը

Հ.Մ.Ը.Մ.ի նշանակն է **ՎԱՀԱՆԸ**:

*Պատասխանե՛ք հետեւեալ հարցումներուն.*

Ի՞նչ է Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանը

-----

Ո՞վ յղացած է նշանաբանը

-----

Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանը գոյգ պարտադրանք կը դնէ իրաքանչիւր միութեանկանի և սկսուտի ուսերուն վրայ: Անոնք զարգանալով, փորձառութիւն ձեռք բե-



րելով պիտի յառաջանան ու բարձրանան, ապա պիտի քաջալերեն ու օժանդակեն ուրիշներուն, որպէսզի անոնք ալ նոյնպէս բարձրանան: Հ.Մ.Ը.Մ.ականին համար բաւարար չէ միայն բարձրանալ ու դիրքի մը հասնիլ, այլ՝ պէտք է իր գիտցածը, սորվածը, բաժնելով ուրիշներուն հետ, զարգացնէ զանոնք եւ բարձրացնէ իր մակարդակին:

*Քանի մը տողերու մէջ գրէ՛, թէ ի՞նչպէս կարելի է նշանաբանը գործադրել առօրեայ կեանքի մէջ.*

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

## 7.- Հ.Մ.Ը.Մ.ի Սկսուողութեան Նշանակը եւ Նշանաբանը

Գծէ՛ Հ.Մ.Ը.Մ.ի Սկսուողական Նշանակը.

Նշանակակիին մէջ ի՞նչ կը ներկայացնեն  
Մասիսը, Արարս գետը եւ արեւը.

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

*Տո՛ւր մնացած բաժիններուն իմաստը.*

-----  
-----  
-----  
-----  
-----

Հ.Մ.Ը.Մ.ի նշանակը ինչո՞վ կը տարբերի համաշխարհային սկաուտական նշանակէն.

-----  
-----  
-----  
-----  
-----

Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները որդեգրած են համաշխարհային սկաուտութեան նշանաբանը, որն է՝

-----

Տո՛ւր այս նշանաբանին իմաստը

-----  
-----



## 8.- Սկաուտութեան Խորհրդանիշը եւ Նշանաբանը



Լորտ Պէյտըն Փաուըլ սկաուտական շարժումի հիմնադրութեան հետ միատեղ, զայն օժտեց նշանակով մը, որ այլեւս պիտի նոյնանար սկաուտութեան հետ: Ան ընտրեց Ծուշանածաղիկը իբրեւ նշան: Ինչո՞ւ Ծուշանածաղիկը, որովհետեւ շուշանածաղիկը կը խորհրդանշէ անմե-

ղութիւն, սրբութիւն, մաքրութիւն եւ այլ վսեմ յատկութիւններ: Թագաւորութիւններ կամ իշխանութիւններ եւս կը գործածէին այս ծաղիկը իբրեւ խորհրդանիշ, զայն բարձրացնելով արքայական մակարդակի:

Ժամանակի ընթացքին, սկաուտները բացատրութիւն տուին այս ծաղիկին զանազան բաժիններուն: Վերի երեք տերեւները կը ներկայացնեն խոստումին երեք յօդուածները: Անոնց վրայի 2 աստղերը կը ներկայացնեն սկաուտին փայլուն աչքերը, որոնք միշտ արթուն են: Վարի 2 ծայրի տերեւները կը ներկայացրնեն սկաուտին ժպտուն դէմքը, իսկ մէջտեղի տերեւը կը ներկայացնէ սկաուտին լեզուն, որ ճշմարիտ է:

Սկաուտները որպէս մղիչ ոյժ, պէտք ունէին նշանաբանի մը: Նշանաբանը բառ մը կամ 2 բառերով կազմուած կ'ըլլայ եւ մարդիկ զայն կ'ունենան իբրեւ կեանքի ուղի:

Սկաուտին նշանաբանը «Մի՛շտ պատրաստ» է: Սկաուտը մի՛շտ պատրաստ է դիմակալելու որևէ պահանջ, որովհետև զարգացած է զանազան գիտելիքներով և անոնց փորձ-կիրարկումով ինքնավստահ դարձած է, ու գիտե վարուելակերպը որևէ հարցի պարագային: Անշուշտ, շատ մը անգամներ օժանդակութիւնները կամ պահանջները պիտի պարտադրեն գոհողութիւն և հաճոյքէ զրկանք. ահա հոս է որ սկաուտը, «Մի՛շտ պատրաստ» նուիրումով, պիտի կատարէ պէտք եղածը, առանց դժուարանալու, առանց վարանելու: Օրինակ, արկածի մը պարագային, նախնական դարմանումներու գործադրութեամբ (First aid) սկաուտը կրնայ կեանք մը փրկել, կամ երբ պզտիկ մը կորսւած է ու առանձին մնացած, պիտի առաջնորդէ զինք կեդրոն և զայն ապահով ձեռքերու յանձնէ:

Յիշէ՛. սկաուտին նշանաբանն է՝

«Մի՛շտ Պատրաստ»



Ի՞նչ կը ներկայացնէ Շուշանածաղիկը

◆ Վերի երեք տերեւները կը ներկայացնեն

-----

◆ ----- կը ներկայացնեն սկաուտին արթուն աչքերը

◆ Սկաուտին ժպտուն դէմքը ներկայացուած է

----- 2 ծայրի -----

-----

◆ Մէջտեղի տերեւը կը ներկայացնէ -----

-----

*Անձնական փորձառութենէդ գրէ՛ 2  
օրինակ, ուր կիրարկած ես նշանաբանը.*

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

-----

Միշտ պատրաստ ըլլալը սկաուտին համար հաճոյք է եւ ո՛չ թէ պարտադրանք:



## 9.- Խոստման Արարողութեան Իմաստը եւ Խորհուրդը

ժամը 10ն է: Սկսուտական խումբը պատուի կանգնած է: Գրօշակները կը ծածանին: Եղբայր Ռազմիկ խումբին դիմաց ծունկի եկած է: Կղերականը ոսկի խաչը եւ Աւետարանը ձեռքին, իր օրհնութիւնը կու տայ: Կարծես Աւարայրի դաշտն է: Հայկական բանակները պատրաստ կանգնած են: Ղեւոնդ Երէց օրհնութիւն կու տայ զօրավար Վարդան Մամիկոնեանին, որ ծունկի եկած, Աւետարանին ու դրօշակին վրայ խոստում կու տայ՝ պահպանելու հայ ժողովուրդը դաժան թշնամիէն եւ պահելու քրիստոնէական կրօնը:

Այդ առաւօտ երբ տեսայ եղբայր Ռազմիկը, նկատեցի թէ ան շատ ուրախ եւ հպարտ էր: Ուզեցի գիտնալ պատճառը:

- Եղբայր Մհեր, ըսաւ ան, ահա ատենէ մը ի վեր կը մասնակցիմ սկսուտական հաւաքոյթներու, սորվեցայ գիտելիքներ եւ զանոնք գործադրելով պիտի օգնեմ ուրիշին, սորվեցայ հաւատարիմ ըլլալ Աստուծոյ, վարժուեցայ նաեւ հնազանդիլ օրէնքներու: ժամը 10ին խոստում պիտի տամ:

- Հսէ՛ տեսնեմ, խոստում տալ ի՞նչ ըսել է:

- Այո՛, գիտեմ, սկսուտ պիտի ըլլամ եւ լրիւ տարազ պիտի հագուիմ, փողկապ, գլխարկ պիտի ունենամ եւ գօտի պիտի կապեմ:

- Այս բոլորը ճիշդ է եղբայր Ռազմիկ, բայց աւելի

կարելոքը այն է, որ խոստում տալէդ վերջ, երբ ըսես որ բան մը պիտի ընես, անպայման ընես: Հիմա պիտի յայտնես, թէ քեզի վստահուած որեւէ պահանջ կամ առաջարկ *անպայման* պիտի գործադրե՛ս, հետեւողութեամբ, բժախնդրութեամբ, նաեւ պիտի ունենաս Արիին (Արեւոյշիւն) դաւանանքը, որպէս կեանքի ուղեցոյց: Հոն ճշդուած պայմանները պիտի գործադրես: Դիւրին է խոստումը արտասանելը եւ ըսելը, բայց կրնայ դիւրին չըլլալ գործադրելը: Յուսանք մինչեւ կեանքիդ վերջը կը յարգես խոստումդ Աստուծոյ եւ ծնողքիդ օրհնութեամբ:

Եւ ահա դարձեալ կը տեսնեմ եղբայր Ռազմիկը ձախ ձեռքով Հ.Մ.Ը.Մ.ի դրօշակը բռնած եւ աջով ալ բարեւի կանգնած, բարձրաձայն եւ կտրուկ կ'արտասանէ Արիին խոստումը:

*\* Պատուոյս վրայ կը խոստանամ ըլլալ  
հաւատարիմ Աստուծոյ եւ հայրենիքիս:*

*\* Միշտ օգնել ուրիշին եւ գործել իբրեւ  
պարտականութեան գիտակից արի  
եւ վեհանձն մարդ:*

*\* Հնազանդիլ Հ.Մ.Ը.Մ.ի Արիներու  
դաւանանքին:*

Եղբայր Յովիկ, խումբի խմբապետը իրեն կ'անցընէ փողկապը եւ գլխարկը, ինչպէս նաեւ ձախ գրպանին վրայ կ'ամրացնէ սկաուտութեան խորհրդանիշ՝

Ծուշանաձաղիկը: Այսպիսով, եղբ. Ռազմիկ վերջնականապես մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի սկստական ընտանիքին:

*Տո՛ւր օրինակ մը, ուր աշակերտ մը իր խոստումը չի յարգեր.*

-----

-----

-----

-----

-----

*Տո՛ւր օրինակ մը, ուր սկստուտ մը իր խոստումը կը յարգէ.*

-----

-----

-----

-----

-----

*Տո՛ւր օրինակ մը, ուր գործաւոր մը խոստում կու տայ.*

-----

-----

-----

-----

-----



## 10.- Բարեւներու Տեսակները եւ Անոնց Գործածութեան Եղանակը

Ի՞նչ կ'ընես երբ ծանօթ մը կամ բարեկամ  
մը տեսնես.

-----

Ի՞նչ ո՞ւր կը բարեւես.

-----

Երբ երկու անձեր իրարու հանդիպին զիրար կը բարեւեն, ցոյց տալու համար որ զիրար կը ճանչնան, բարեկամ են եւ ծանօթ: Զանազան մշակոյթներ ունին բարեւելու տարբեր ձեւեր: Օրինակ, ձեռք թօթուել, քիթ-քիթի քսել, ձեռքը ճակտին ու բերնին դնել եւ ապա բանալ՝ դէպի առջեւ տանելով կամ բռունցքը իրարու զարնել, եւայլն:

Սկառուտներն ալ իրենց կարգին պէտք է բարեւեն զիրար ու իրենց բարեկամներուն, որովհետեւ ամէն սկառուտ բարեկամ է ուրիշ սկառուտի:

*Գրէ՛ դաւանանքի թիւ 5 յօդուածը, ուր  
կը խօսի սկառուտներու բարեկամութեան  
մասին.*

-----

-----

-----

Սկառուտները ունին բարեւելյու յատուկ ձեւեր.

**1.- Պաշտօնական բարեւ**

Պատուի ա՛ն հրահանգին, եթէ սկառուտը լման տարագ հագած է, կը գործադրէ հրահանգը աջ ձեռքով. միջնեմատը կը դպչի ճակատին, արմուկը հորիզոնական, թելը եւ ձեռքը նոյն դիրքի վրայ:



Աջ ձեռքը կ'ըլլայ նկարին մէջ ցոյց տրուած ձեւով:

**Ամբողջացո՛ւր.**

Ցուցամատը, միջնեմատը եւ մատնեմատը կը խորհրդանշեն -----

----- բաժինները:

Բթամատը ճկոյտին վրայ կը խորհրդանշէ պատկերի

մեծին:



**Ծանօթ.** Հին ժամանակներուն թագաւորներն ու թագուհիները կը փոխադրուէին աթոռներու վրայ, ուսամբարձ (շալկըւած ուսի վրայ): Պարզ ժողովուրդը որպէսզի ցոյց տայ, թէ չ'ուզեր թագաւորին մակարդակին բարձրանալ, ձեռքով կը գոցէր իր տեսողութիւնը, այդ իմաստով մնացած է բարեւելյու այս ձեւը:

## 2.- Գաւազանով բարեւ

Երբ սկսուած իր ձեռքին գաւազան ունի, բարեւ կու տայ յատուկ ձեւով:

Պատուի ա՛ն հրահանգին, պատրաստ վիճակի մէջ, աջ ձեռքով բռնած գաւազանը կը փոխանցէ ձախ ձեռքին: Կը բարձրացնէ գետնէն քիչ մը վեր՝ մօտ 20 cm (8 inch) ու աջ ձեռքը բարեւելու ձեւով կը տանի դէպի գաւազան ու ձախ բռունցքէն վեր դնելով ուղիղ կը կանգնի:



## 3.- Զեռնուիլ

Տարբերելով բոլոր մարդոցմէ, սկսուած կը ձեռնուի ձախ ձեռքով, ճկոյթը անցը-



նելով դիմացինի ճկոյթին եւ ցուցամատը դնելով անոր բազկերակին վրայ: Իրարու ձախ ձեռք թօթուելով եւ սեղմելով, սկսուածները իրենց սրտերուն մօտիկ ըլլալը կը յիշեցնեն:

4.- Գլուխով . անշուշտ կը պատահի որ սկսուած մը պէտք ունենայ բարեւելու եւ սակայն ձեռքերը զբաղած են (առարկայ շալկած է): Այս պարագային սկսուած գլխու պզտիկ շարժումով մը բարեւ կու տայ:



Սկաուտները պարտաւոր են բարեւելու իրենց մեծաւորին, այսպէս ռեւէ սկաուտ իրմէ բարձրաստիճան սկաուտին հետ խօսելէ առաջ պարտի «լման բարեւ» տալ եւ բարեւին պատասխանը ստանալէ ետք միայն խօսելու սկսիլ:



## 11.- Հ.Մ.Ը.Մ.ի Սկաուտական Տարազին Չանագան Մասերը

Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները կը հագնին տարազ: Ան պէտք է ըլլայ միշտ լման, մաքուր եւ կանոնաւոր սկաուտին նման:

Իւրաքանչիւր երկրի մէջ գտնուող Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտին տարազը կը պատշաճի տեղւոյն սկաուտներու տարազին, սակայն միշտ կտորներ կան, որոնք Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր սկաուտները ունին իրենց տարազին վրայ, ըլլան անոնք Հայաստան, Միջին Արեւելք, Եւրոպա կամ Ամերիկա:

*Թուէ՛ այն հինգ կտորները, որոնք  
կը կրեն Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր սկաուտները.*

- 1.-----
- 2.-----
- 3.-----
- 4.-----
- 5.-----

*Գրէ՛ հազած տարապիղ մանրամասնութիւնները.*

- Պէրէ, պոէր, գդակ-----  
Ի՞նչ գոյն շապիկ-----  
Երկա՞ր թէ կարճ տաբատ եւ ի՞նչ գոյն  
-----  
Գուլպային գոյնը-----  
Ուրիշ ի՞նչ նշաններ ունիս-----  
Տարազդ-----